

Միւշիրը գոհացնելու համար, մէկ տարի յետոյ Քեամիլ փաշայի հրամանով որ այն ժամանակի էրզրումի կառավարիչն էր, գնաց նաև Հէքեարի՝ քիւրդերու շեֆ Նուրուլլահ պէյի մօտ, որը նոյնպէս ապստամբած էր կառավարութեան դէմ:

Այս անգամ նորէն գոհ մնացին Մահմուտ էֆ.էն կառավարչի հրամանները գործադրութեան զնելու գործելակերպին համար: Այս միջադէպերուն վրայ, յաջողեցան խոստումներով էրզրում տանիլ Պէտիր-Սոնի եղբայր Սան-Մահմուտը. այս զօրաւոր շեֆը, որ միայն քիւրդերէն զիտէր, և որ Օսմ. կառավարութիւնը մեծ չափ ունէր անոր խնայելու, իր էրզրում մնացած ժամանակի տեղութեամբ՝ պատիւներու արժանացաւ Օսմ. իշխանութեան կողմէն. Մահմուտ էֆ. իրր ծանօթ այդ լեզուին՝ զրուեցաւ անոր իրր թարգման ու ընկեր:

Քիչ ժամանակէն Սան-Մահմուտը ապստամբեցաւ Գաւաշի մէջ, որ Օսմ. կառավարութիւնը նշանակած էր իրր բնակելու տեղ, Վանէն 10 ժամ հեռու. ձերբակալեցին խեղճ Մահմուտ էֆէնտին (\*) ու բանտ ձգեցին, ու 15 օր յետոյ միայն արձակեցին մեծ սպանալիքներով:»

Այս զանազան պատմութեան մենք կու գանք հետեւեալ եղրակացութեանը. Հայկական շրջանները, — Կարին, Վան, Բաղէշ, Բայու, Տիգրանակերտը, Քիւրդ իշխանութեան հարստահարութեանն էր մատնուած, որոնց կ'աջակցէին և նահանգապետներն ու փաշաները, որոնք հաւանորէն միշտ ազգով Քիւրդ:

Քիւրդիստանի շրջաններէն ևս Հէքեարիի Նուրուլլահ պէյն էր ապստամբած՝ հաւանական է և դաշնակցած Պէտիր-Սան պէյի հետ:

Կը նշանակէ, Օսմ. իշխանութիւնը կը պարտաւորուի նոր նուաճման մը ձեռնարկելու, որուն կ'օգնէ այդ նահանգներու և քաղաքներու հայ ժողովուրդը: Միւս կողմէն Հայ իշխաններ կան, որոնք կը մասնակցին Պէտիրանեան ապստամբական շարժման: Այս երկու բաժանումներու բացատրութիւնը մենք կու տանք անմիջապէս վերջ:

(\*) Սա այն Մահմուտ էֆ.ն է, որ օգնել է Ռուս հիւպատոս Ալեքսանտր ժապային՝ գրի առնել Քիւրդերու կեանքն ու կենցաղը, որի վրայ հիմնած է իր գիտական և քաղաքական ուսումնասիրութիւնը Բրօֆէտէօս Lerche: